ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԳԵՂԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2217 գ. Գեղաշեն, 1-ին փողոց 30 Վարչական շենք, Հեռ. (060) 286013 , էլ.փոստ gechashen67@mail.ru

13.10.2017թ. N01/164-17

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

ՄԵԾԱՐԳՈ ՄԱՐԶՊԵՏ

Ձեր հրապարակմանն ենք ուղարկում Գեղաշեն համայնքի ղեկավարի որոշումները:

Առդիր 3 էջ

Համայնքի ղեկավար՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Լ. Հովհաննիսյան
Հեռ. 077427455

ԳԵՂԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ԵԼՄՏ No 164
«13» 10 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 89

ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով՝ որոշում եմ.

1.2017 թվականի հոկտեմբերի 13- ին ժամը 12:00-ին գումարել Գեղաշեն համայնքի ավագանու հերթական նիստ :
2.Հերթական նիստն անցկացնել Գեղաշենի համայնքապետարանի վարչական շենքում:

3.Հաստատել արտահերթ նիստի օրակարգը՝
1)Համայնքի ղեկավարի հաղորդումը 2017թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին:
2)Գեղաշեն համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N53-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
3)Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին:
4)Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
5)Հանձնաժողով կազմելու մասին:
6)Համայնքի ղեկավարի հաղորդումը 2017թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին:
7)Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին:
8)Համայնքի ղեկավարի հաղորդումը 2017թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբեր 06
գ.Գեղաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 90

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի դրույթներով, Գեղաշեն համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 21-ի N 50-Ա որոշումով, հիմք ընդունելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի ուսումնասիրության ակտերը և համայնքի բնակիչների դիմումները, որոշում եմ.

1.Հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշման կից հավելվածում նշված բնակիչների ընտանիքները գտնվում են սոցիալական ծանր վիճակում համայնքի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից կանխիկ որպես օգնություն հատկացնել յուրաքանչյուր ընտանիքին, համաձայն կից ցուցակի:
2.Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ Հայկուհի Անտոնյանին 7 աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբեր 09
գ.Գեղաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 91

ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 07-Ի N 48 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով՝ որոշում եմ.

1.Գեղաշեն համայնքի ղեկավարի 2011 թվականի դեկտեմբերի 07-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատող հանձնաժողով սահմանելու մասին» N48 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
1)Որոշման 1-ին կետը խմբագրել և շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «Համայնքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանակն անձանց պատճառված վնասների գնահատող հանձնաժողով սահմանել հետևյալ կազմով՝ հանձնաժողովի նախագահ Արմեն Հովհաննիսյան-համայնքի ղեկավար, հանձնաժողովի անդամներ Վահան Սարգսյան-համայնքի ղեկավարի տեղակալ, Զաքարիա Վարդանյան-աշխատակազմի գլխավոր մասնագետ, Անդրանիկ Դավթյան-ավագանու անդամ, Ատոմ Բաղալյան-ավագանու անդամ»:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբեր 10
գ.Գեղաշեն